

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

28.09.2019թ.

ք. Իջևան

Նախագահ՝ Գ. Ավետիսյան /դեկանի պաշտոնակատար/

Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան /քարտուղար/

Խորհրդի նիստին մասնակցում էին 16 անդամից 14-ը:

Բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Օրակարգ

1. 2019-20 ուստարվա ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների տարեկան աշխատանքային պլանների քննարկում և հաստատում: / Ջեյ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/
2. 2019-20 ուստարվա «Ընդհանուր տնտեսագիտության», «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնների նիստերի ժամանակացույց-պլանների քննարկում և հաստատում:/ Ջեյ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/
3. 2020թ. բակալավրի կրթական ծրագրերով ընդունելության մասնագիտությունների ցանկը/Ջեյ Գ. Ավետիսյան/:

Ֆակուլտետի խորհրդի անդամների կողմից բաց քվեարկությամբ միաձայն ընդունվեց նիստի օրակարգը:

1. Լսեցին - 2018-2019 ուս. տարվա ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների (Ընդհանուր տնտեսագիտություն, Տուրիզմի կառավարման և մշակութաբանություն) աշխատանքային պլանների քննարկում և հաստատում:

Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչի ժ/պ Մ. Միքայելյանը ֆակուլտետի գիտխորհրդի քննարկմանը ներկայացրեց 2019-20 ուստարվա համար կազմած ամբիոնի տարեկան աշխատանքային պլանի նախագիծը: Նա նշեց, որ ամբիոնի տարեկան աշխատանքային պլանը կազմվել է ելնելով ԵՊՀ ԻՄ ռազմավարական ծրագրից (2016-2020թթ.), ֆակուլտետի տարեկան աշխատանքային պլանից:

Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժ/պ Գ. Հովհաննիսյանը ներկայացրեց 2019- 20 ուստարվա համար կազմած ամբիոնի տարեկան աշխատանքային պլանի նախագիծը: Այն նույնպես բխում էր ֆակուլտետի տարեկան աշխատանքային պլանից և համապատասխանում էր ընդհանուր ծրագրերին:

Գ. Ավետիսյանը նկատեց, որ քննարկման ներկայացված աշխատանքային պլանների նախագծերը ներառում են ամբիոնների գիտակրթական գործունեության բոլոր հիմնական ուղղությունները, ընթացակարգերն ու գործընթացները: Դրանք նպաստում են ուսումնական տարվա ընթացքում ամբիոնային աշխատանքների ճիշտ կազմակերպման և ամբիոնների աշխատանքների ակտիվացման գործին:

Արտահայտվեցին - Տ. Թամրազյանը, Ա. Պոտոսյանը:

Նրանք նշեցին, որ կատարված ուսումնասիրության և համեմատական վերլուծության արդյունքում պարզվել է, որ ամբիոնների աշխատանքային պլանները ըստ թեմատիկ և ժամանակագրական կառուցվածքի, համապատասխանում են ֆակուլտետի տարեկան աշխատանքային պլանին և, հավանություն տալով, ներկայացրին քննարկման ու հաստատման:

Որոշեցին - հաստատել 2019-20 ուստարվա «Ընդհանուր տնտեսագիտության» և «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնների աշխատանքային պլանները:

2. Լսեցին.-2019-20 ուս. տարվա «Ընդհանուր տնտեսագիտության», «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնների նիստերի ժամանակացույց-պլանների քննարկման և հաստատման մասին:

Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչի ժ/պ Մ. Միքայելյանը ներկայացրեց 2019-20 ուստարվա համար կազմած ամբիոնի նիստերի ժամանակացույց- պլանը:

Նա նշեց, որ պլանը կազմվել է հիմք ընդունելով Ֆակուլտետի կանանադրությունը, ֆակուլտետի գիտական խորհրդի նիստերի ժամանակացույց-պլանը, ամբիոնում կատարվող աշխատանքները:

Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժ/պ Գ. Հովհաննիսյանը ներկայացրեց 2019-20 ուստարվա համար կազմած ամբիոնի նիստերի ժամանակացույց- պլանը: Նա նշեց, որ աշխատանքային պլանի ժամանակացույցը քննարկվել է ամբիոնում և կազմվել է ըստ գործող կարգերի:

Որոշեցին - հաստատել 2019-20 ուստարվա Ընդհանուր տնտեսագիտության և Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնների նիստերի ժամանակացույց- պլանները:

3.1.5. 2020թ. բակալավրի կրթական ծրագրերով ընդունելության մասնագիտությունների ցանկի քննարկման մասին/Ձեկ Գ. Ավետիսյան/:

Գ. Ավետիսյանը նշեց, որ ֆակուլտետում 2020թ. բակալավրի կրթական ծրագրերով նախատեսվում է ընդունելություն կազմակերպել երկու մասնագիտությունների գծով: Նա ներկայացրեց, որ ֆակուլտետում գործում է 4 կրթական ծրագիր, սակայն միայն «Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» կրթական ծրագրերով է պլանավորվում իրականացնել ընդունելություն: Այս մասնագիտությունները առաջարկվել են ամբիոնների կողմից աշխատաշուկայի ուսումնասիրության արդյունքում: Այսօր աշխատաշուկայից ստացվող ազդակները վկայում են, որ «Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» մասնագիտությունները ունեն պահանջարկ:

Արտահայտվեցին - Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը

Նրանք նշեցին, որ վերոնշյալ ԿԾ գործում են ֆակուլտետում երեք տարի: Ունենք մշակված համապատասխան կրթական ծրագրեր, որոնք յուրաքանչյուր տարի վերանայվում և բարելավվում են: Դեռևս չունենք նշված մասնագիտություններով շրջանավարտներ, սակայն մշակված կրթական ծրագիրները համահունչ են աշխատաշուկայի պահանջներին:

Նրանք նշեցին նաև, որ ԿԾ վերջնարդյունքների ապահովումը հնարավորություն կտա մեր շրջանավարտներին լինել մրցունակ աշխատաշուկայում, որը կլինի գովազդ մեր մասնագիտությունների համար:

Նրանք նշեցին, որ «Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» մասնագիտություններով ընդունելություն կազմակերպելը նպատակահարմար է:

Որոշեցին – Հաստատել 2020թ. բակալավրի կրթական ծրագրերով ընդունելություն մասնագիտությունների (Ֆինանսներ(ըստ ոլորտի) և Զբոսաշրջություն)ցանկը:

**Գիտխորհրդի նախագահ՝
Քարտուղար՝**

**Գ. Ավետիսյան
Ա. Ալեքսանյան**

